

---

**ՄՏԵՓԱՆՈՍ ԵՐԵՑ ՀԱԶԱՐՁՐԻԲԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ «ՊԱՏՄԱԳԻՐՔԸ»  
(«ՀԱՆԳԻՏԱԳԻՐՔԸ»)**

**ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐՅԱՆ**

Ուշ միջնադարի և նոր դարաշրջանի Իրանի պատմության ուսումնասիրության համար բացառիկ կարևոր նշանակություն ունեն հայկական բազմաբովանդակ և հարուստ աղբյուրները: Դրանց արժեքը ոչ միայն եզակիությունն է այդ երկրի պատմության առանձին հարցեր լուսաբանելիս, այլև, թերևս, առաջին հերթին, փաստերի հավաստիությունը: Գիտահամեմատական եղանակով կատարված բազմաթիվ ուսումնասիրությունները վկայում են, որ հայկական աղբյուրների ճնշող մեծամասնությունը արժանահավաստ է և միանգամայն վստահելի:

Իրանի պատմությանը վերաբերող հայկական աղբյուրները հույժ կարևոր են նաև այն պատճառով, որ դրանք զերծ են պարսկական ներքողագրական պատմագրությանը բնորոշ թերություններից, ինչպես նաև շեշտված կողմնակալությունից: Պատահական չէ, որ պարսիկ անվանի պատմաբան Մայիդ Նաֆիսին գտնում է, որ Իրանի ամբողջական պատմությունը հնարավոր չէ գրել առանց հայկական աղբյուրների վկայությունների:

XVI դարի հայ իրականության մեջ, ի տարբերություն նախորդ և հետագա հարյուրամյակների, պատմագիտական աշխատությունները խիստ սակավ են: Այդ ժամանակահատվածի վկայությունների հայկական աղբյուրները սահմանափակվում են լոկ մի շարք մանր ժամանակագրություններով և ձեռագրերի հիշատակարաններով, բայցևայնպես դրանք ևս ինչ-որ չափով լրացնում են այն բացը, որ նկատվում է իրանական աղբյուրներում: XVII դարը հայկական իրականության մեջ կտրուկ առանձնանում է աղբյուրների հարստությամբ և առատությամբ: Այդ հարյուրամյակի քառասունական թվականներից Հայաստանում սկսված ուսումնալուսավորչական շարժման շնորհիվ ստեղծվեցին պատմագիտական մի շարք աշխատություններ, որոնցում հեղինակները գրեթե առանց բացառության անդրադառնում են նաև Իրանի պատմությանը:

Սակայն ավստասանքով պետք է նշենք, որ այս դարաշրջանի մի շարք աղբյուրներ, որոնք նույնպես առատ նյութ են պարունակում Իրանի պատմության, իրանահայ գաղթօջախի, այդ երկրում և նրա շուրջը տեղի ունեցած ռազմական ու քաղաքական իրադարձությունների, նրա հոգևոր կյանքի այլևայլ բնագավառների մասին, ոչ միայն դեռևս

կարոտ են գիտական մշակման, այլև ծանոթ չեն գիտական շրջաններին: Առհասարակ հայ իրականության մեջ քիչ չեն հայոց պատմությանն ու մշակույթին ամբողջովին նվիրված գրչի այնպիսի մշակները, որոնք իրենց անխոնջ ու տքնաջան աշխատանքով կերտել են արժեքավոր գործեր, սակայն տարաբախտաբար դրանք առ այսօր անհայտ են և չեն գնահատվել ըստ արժանվույն: Նրանցից է տեր Ստեփանոս Երեց Տերտերյանը, որն առավել շատ հայտնի է Ստեփանոս Երեց Հազարօրիքեցի անունով:

Նրա կյանքի մասին տեղեկությունները չափազանց սուղ են և թերի: Ստույգ հայտնի չեն նույնիսկ ծննդյան ու մահվան թվականները: Ենթադրվում է, որ ծնվել է 1746 թվականին Իրանի Սպահան նահանգի Փերիա գավառի Հազարօրիք գյուղում և մահացել 1813 թվականին՝ 67 տարեկան հասակում: Հողին է հանձնվել իր ծննդավայրի գերեզմանատանը<sup>1</sup>: Նրա անձի ու կյանքի մասին որոշ տեղեկություններ կան իր «Պատմագրքում», որոնք, սակայն, բավարար չեն ամբողջական պատկերացում կազմելու նրա կենսագրության մասին:

«Պատմագրքի» հիշատակարանում Ստեփանոս Երեցը գրում է, որ ինքը քահանայական տոհմից է: Նրա նախահայրը՝ տեր Մատթեոս անունով քահանան, «էր ի բնիկ գաւառացն Արարադեան», այսինքն՝ շահ Աբբաս Ա-ի (1587-1629) XVII դարի սկզբին կազմակերպած մեծ բռնագաղթի («մեծ սուրգուն») ժամանակ Արևելյան Հայաստանից, մասամբ նաև Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներից Իրան տարագրված հայերից էր:

Նրա կյանքի մասին մեզ հասած կցկտուր տեղեկություններից կարելի է ենթադրել, որ ապագա պատմագրի մանկությունն անցել է Հազարօրիքում: Հայտնի չէ արդյոք նա ողջ կյանքը ապրել է ծննդավայրում, թե՞ նաև ճանապարհորդել է: Միանգամայն ակնհայտ է, սակայն, որ նա եղել է ուսյալ, կարդացած և բանիմաց անձնավորություն: Ըստ ամենայնի՝ նա քաջատեղյակ և իրազեկ էր ոչ միայն իր ժամանակների Պարսկաստանում, այլև հարևան երկրներում տեղի ունեցող իրադարձություններին, որոնք նա հմտորեն վերլուծել է և գնահատել: Դա, անկասկած, վկայում է նրա բնատուր օժտվածության, պատրաստվածության և լայն մտահորիզոնի մասին: Իր ժամանակի դառն ու աղետալի իրադարձությունների նկարագրություններից երևում է, որ նա ոչ միայն զարգացած անհատականություն էր, այլև միաժամանակ խոհուն փիլիսոփա: Խիստ ուշագրավ են նրա փիլիսոփայական մտորումները կյանքի ու մահվան առեղծվածի, սիրո ու բարեկամության, երջանկության ու տառապանքների, կյանքի իմաստի, դժբախտության անցողիկության և շատ այլ երևույթների մասին: Լինելով հավատավոր հոգևորական՝ Ստեփանոս Երեցը իր փիլիսոփայական մտորումները հաճախ

<sup>1</sup> Տե՛ս **Լևոն Մինասյան**, Պատմագիր Ստեփանոս Երեց, սեղմ տողեր նրա կյանքի ու գրականության մասին, Թեհրան, 1965:

ներկայացնում է Հին ու Նոր կտակարաններից բերված ասույթներով: Նրա գոհաբանական ուղերձները Բարձրալին աչքի են ընկնում բանաստեղծական բարձր ներշնչանքով և ոսկեդենիկ գրաբարով:

Ստեփանոս Երեցը իր ժամանակի հարագատ զավակն էր: Նրա դատողությունները խարսխված էին հայկական ավանդույթների և Հայ առաքելական եկեղեցու հիմնարար սկզբունքների վրա: Թեպետ նրան վիճակված էր ապրել և գործել արևելքի ուշ միջնադարի մուր, երերուն, անապահով և արյունոտ մղձավանջների ժամանակներում, սակայն նա իր դավանած սկզբունքներում անզիջում էր և լավատես: Թեև նա ողբում է Իրանի հայ բնակչության դժբախտ վիճակը, բողոքում իրեն բաժին հասած թշվառությունների դեմ, բայց և հորդորում է չհուսահատվել: Դա, անշուշտ, վկայում է այն մասին, որ նա վստահ էր իր ժողովրդի կենսունակությանը: Ամեն անգամ պատմելով հայրենի եզերքի ավերմունքի ու կողոպուտի մասին՝ նա անմիջապես ավելացրել է, որ կյանքը դրանով բնավ չի ավարտվում, այլ վերստին սկսում է խլրտալ ու ծաղկել հայ մարդու կամքի ու բազկի ուժով: Որպես ստեղծագործ խառնվածքի տեր հոգևորական՝ Ստեփանոս Երեցը թողել է նաև գրական բավականին ծավալուն ժառանգություն: Նրա գրչին են պատկանում ոտանավորներ, «Երգարան», որը ժողովրդական բանահյուսության հետաքրքիր հավաքածու է, «Տաղարան», որտեղ ամփոփված են զանազան սրբերի նվիրված ներբողական տաղեր, ապաշխարության երգեր, ներբողական գրվածքներ՝ «առ ծնողաց», «հոգևորաց», «առ Աստուած», հանելուկներ, խրատներ, խրախճանքի երգեր, նամակներ, թուրքերեն գրվածքներ և գրական մեծ ու փոքր այլ գործեր: Նրա բանաստեղծությունները թե՛ բովանդակային և թե՛ ստեղծագործական առումով բարձրարժեք չեն, սակայն պարզ ու անպաճույճ լեզվի, ժողովրդական դարձվածքների շնորհիվ կարող են որոշ արժեք ունենալ Փերիա գավառի բանահյուսությանը, տեղի հայ բնակչության հոգսերին, նրա կենցաղին, մտածելակերպին և այլնին տեղեկանալու առումով: Չափածո գործերից բացի՝ Ստեփանոս Երեցն ունի նաև արձակ գրվածքներ, որոնք զանազան խորհրդածություններ են բնության որոշ երևույթների և այլնի մասին:

Ստեփանոս Երեցի գրական ժառանգության առավել գնահատելի և արժեքավոր գործը, անկասկած, նրա «Հանգիտագիրք» վերնագրով պատմական երկն է, որն ավելի շատ ընդունված է անվանել «Պատմագիրք»: Հեղինակն այն բնութագրում է «Մտածումներ անցյալ և ներկա ժամանակների մասին»: Դրանում նկարագրվում են XVII դարի վերջին և XVIII դարում Իրանում ծավալվող իրադարձությունները, տեղեկություններ են հաղորդվում այդ երկրի հայկական համայնքի, հատկապես Փերիա գավառի հայության մասին, հարուստ տվյալներ կան այլևայլ տիրողների լծի տակ հեծող իրանահայության մասին և այլն:

Պատմական այդ երկը զետեղված է 488 էջանոց հաստափոր ու

կաշեկազմ մի մաստյանում, որի մեծ մասը զբաղեցնում է բուն պատմագրությունը, որը բաղկացած է երկու նախաբանից, բուն պատմությունից՝ ամփոփված քառասունմեկ պրակների մեջ, և հիշատակարանից: Մնացածը նրա ոտանավորներն ու տաղերն են: Վերջում հեղինակը տալիս է խրթին ու անհասկանալի բառերի և բառակապակցությունների մոտ 40 էջից բաղկացած մի բառացանկ, որը Ստեփանոս Երեցն անվանել է «Լուծմունք բառից»: Բացատրելով այդ բառարանի նպատակը՝ պատմիչը գրում է. «Աստանոր կամին լուծանել զխրթին և դժվարիմաց բառ գրոյս այսմիկ, զի ամենայն ոք դուրեաւ ծանիցէ զխրթին բառ տրայ անտարակուսանաց գրեալ ի վերայ ալֆաֆետից, որ է այբուբենից»:

«Հանգիտագիրքը» մեզ է հասել երկու ձեռագրով: Բնագիր օրինակը գտնվում է Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում (№ 654): Երկու ընդօրինակություններից մեկը գտնվում է գրասեր Կարո Մինասյանի մասնավոր հավաքածուում, երկրորդը, որը 1946 թվականին արտագրել է իրանահայ ճանաչված բանասեր Լևոն Մինասյանը, գտնվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում (№ 10555):

Իրանի և իրանահայության վերաբերյալ «Պատմագրքի» տեղեկությունները բացառիկ արժեք ունեն: Դրանք այնքան հարուստ են և բազմազան, որ կարիք ունեն իրանագիտական տեսանկյունից հետազոտության: Դա հնարավորություն կընձեռի նաև այլ աղբյուրների հետ բաղդատելով ստույգ գնահատելու «Պատմագրքի» իրական արժեքը, մասնավորապես պարզաբանելու, թե ինչ նոր տվյալներ կան Իրանի XVII դարի երկրորդ կեսի և XVIII դարի պատմության վերաբերյալ:

«Պատմագրքի» առաջին էջը բացվում է Ստեփանոս Երեցի հետևյալ գրությամբ. «Գիրք, որ կոչի Հանգիտագիրք, որ է մտածմունք ժամանակաց՝ անցելոց և ներկայից՝ հանգանակեալ և ծրեալ ի հայրապետութեան Սրբոց սարսափելի (ահեղ - Վ. Բ.) Աթոռոյն Էջմիածնի տեառն Ղուկասոյ վեհափառ կաթողիկոսի Ամենայն հայոց և ի առաջնորդութեանն նահանկիս մերոյ տեառն վեհանձնեայ Մկրտիչ վճտիս ախորժ առաջնորդին, արժանաժառանգ Սուրբ Աթոռոյն Ամենափրկչի վսեմական վանացն ի ներթուոջ մարդեղութեան տեառն ՌՉՁՁ (1786) և թուականութեան մերոյ ՌԲՃԼՁ ներամսեանն յուլիսի, որոյ յաւուրքն էին Ժ և Է Ապաշնորի տէր Ստեփանոսէ»<sup>2</sup>:

«Պատմագրքի» երկրորդ էջին հավանաբար իր իսկ ձեռքով պատկերված է Ստեփանոս Երեցի նկարը՝ քահանայական տարագով, որի տակ մակագրված է.

«Ստեփանոս վատթ (ա) ր չընչին,  
Քարշ մեղաւոր աղտեղի հին»:

<sup>2</sup> **Ստեփանոս Երեց**, Պատմագիրք («Հանգիտագիրք»), Թեհրան, 2018, էջ 6 (այսուհետև այս գրքից հղումները կտրվեն տեքստում՝ նշելով միայն էջը):

Նախաբանում խոսքն ուղղելով առաջնորդ Հակոբ Եպիսկոպոսին՝ պատմագիրը բացատրում է, թե ինչն է դրդել իրեն գրիչ վերցնելու ու շարադրելու «Հանգիտագիրքը»: «Մեծաւ խոնարհութեամբ, պատկառանօք հանդերձ գեկուցանեմ առ գորովագոյթ ծնողդ իմ, քանզի քահանայից և տանուտերաց գաւառաց հարկ եղին ի վերա թերագոյն ծառայիս, այնքան ճեպով և ըշտապով, որ ոչ կարացի քերցել և գերծանել վարմից նոցա» (էջ 9-10),- գրում է Ստեփանոս Երեցը: Այնուհետև, ներկայացնելով այդ «տարուբերվող», «ձախորդաբեր», դառն ու տխուր ժամանակներում Փերիայի հայ բնակչության ծայրահեղ վատ վիճակը և անողորմ ու վայրագ իշխողներից նրա կրած նեղություններն ու դժվարությունները, ազդու և սրտառուչ գրում է. «Ոչ քարտէզ բաւ է՝ առի շարագութել և ոչ մելան բաւ է՝ առ ի ծրել, և ոչ կածին բաւ է՝ առ ի գրել, և ոչ ազդարան լեզվի՝ առ ի ճառել, որքանութեանց նեղութեանցն, գորս կրեցին ողորմելի ազինս մերոյ» (էջ 10):

Հիշատակարանում պատմագիրը իր այդ միտքը ներկայացնում է ավելի պատկերավոր. «Որ թէ ծովն օվկիանոս մելան եղեալ էր, և ամենայն շամբս եղեգեան կածեն, և դաշտն արաբացոց՝ քարտէս, ոչ բաւ էին՝ առ ի շարագութել գորքանուինն նեղութեանցն»: Ապա, խոսքն ուղղելով իր ընթերցողներին, խնդրում է չմեղադրել ու չպարսավել իրեն «թերությունների, խրթին ոճի և սխալների համար», որովհետև այդ խառնակ, «տարուբերվող ժամանակներում», մանավանդ իր ձեռքի տակ պատմական նյութերի պակասության և իր «անգիտութեան ու հեղգութեան» պատճառով իրեն չի հաջողվել սրանից ավելին անել: Նա ներողամտություն է հայցում, որ եթե իր գործի մեջ գտնվի որևէ անպատեհ կամ սխալ բան՝ մեծահոգաբար «հանուն Տիրոջ» ներեն իրեն, քանի որ իր կարողությունն այդքան էր («զի կարն մեր այս էր»): Միաժամանակ նա հատուկ շեշտում է, որ իր երկը գրել է «մեծ տքնութեամբ», «արտասուաթոր աչօք», դառն ու կակիծով լի ապրումներով, գիշեր ու ցերեկ տքնելով, «հարցուփորձ անելով, ստուգելով ու գրելով» (էջ 10): «Ազդումն ընթերցողաց» («Ազդարարություն ընթերցողներին») վերտառությամբ բաժնում պատմագիրը համեստորեն ասում է. «Ես, նվաստս, կուտ կերպով ջանում էի այս սակավ շարադրանքի վրա՝ գորությամբ գրելու՝ բայց չկարողացա, քանի որ ստրուկս ի ծնե ծույլ և անգետ էի», «Գերագույնիցդ խնդրում եմ, որ քամահրանք չբարդեք նվաստիս վրա, այլ ներեք ինձ՝ հանուն Տիրոջ»: Այնուհետև նա տեղեկացնում է իր ընթերցողներին, որ երկը շարադրել է «սկսած շահ Աբբաս Երկրորդի ժամանակաշրջանից» «մինչև վանքի պատմությունը» (10-11):

Նախաբանից հետո Ստեփանոս Երեցը հանգամանալից պատմում է իր հարազատ գյուղի՝ Հազարջրիքի Ս. Աստվածածին վանքի կառուցման մասին: Հայրենի եզերքից կտրված և օտար երկիր բռնագաղթած հայության համար եկեղեցին սուկ աղոթատեղի չէր, այլ հույսի ապավեն, «զի նովաւ մխիթարիմք այս օտար աշխարհիս» (էջ 13): Որպես ի-

րենց բնակավայրում աղոթատուն ունենալու անհրաժեշտության հիմնավորում Հազարչորիքի բնակիչները ասում են. «Այս յօտարոտի աշխարհի և այլասեռից ազգաց միջի բնակեալ եմք և ոչ ունիմք զնշան ինչ և առիթ հաստատութեան քրիստոնէականի՝ ո՛չ վանորայք, և ո՛չ տեղիք ուխտից, և ո՛չ սրբոց նշանակաց կառուցմունք, ո՛չ գերեզման և դամբարան սրբոցն Աստուծոյ և կամ մերոց հարց և հաւուց նախնեաց, այլ միայն զաչ սրբոյ առաքելոյն Թօմայի, որ ի ժամ սուրգունին բերաք զհետ մեր» (էջ 13):

Հազարչորիքի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցումը ավարտվում է 1666 թ. օգոստոսին: Պատմագիրը հայտնում է, որ եկեղեցուն (վանքին) կից բացվել է նաև դպրոց, որտեղ «ուսուցին բազում աշակերտս»: Ստեփանոս Երեցը անուղղակիորեն ցանկանում է շեշտել, որ եկեղեցին և դպրոցը հայապահպանման երկու խարիսխներն են:

Պատմագիրքը գրվել է 1785-1789 թվականներին Փերիայի Հազարչորիք գյուղում: «Ըսկիսպն և աւարտն սորա,- գրում է պատմիչ-քահանան,- եղև ի գաւառն Փերիայ՝ ի գեղն Հազարչորիպ, ընդ հովանեալ Սրբոյ Աստուածածնի, ձեռամբ վատշուէր Ստեփանոս անարդուն քահանայի՝ ի վայելումն և ի զթօսանս մակացու և բարեմիտ քրիստոսասէր յանձինդ»:

Ստեփանոս Երեցի երկի ժամանակագրական սահմանները սկսվում են Իրանում շահ Աբբաս Բ-ի (1642-1666) կառավարման վերջից և ավարտվում 1789 թվականին, այսինքն՝ Սոհամմադ խան Ղաջարի և Լոթֆալի խանի ժամանակներում: Հայտնի է, որ Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ ընգրկում է 1601-1662 թվականները: Խաչատուր Ջուղայեցին իր «Պատմութիւն Պարսիցը» հասցնում է մինչև 1779 թվական: Հետևաբար, Ստեփանոս Երեցի «Հանգիտագիրքը» կարելի է համարել Առաքել Դավրիժեցու և Խաչատուր Ջուղայեցու երկերի շարունակությունը: Ըստ էության՝ Ստեփանոսը հայ վերջին պատմիչն է կամ «պատմիչների կնիքը», որից հետո սկիզբ է առնում գիտական պատմագիտությունը:

Այսպիսով, Ստեփանոսը իր նկարագրած դեպքերի մեծ մասի ոչ միայն ժամանակակիցն է, այլև ականատեսն ու վկան: Նա անկեղծ արձանագրող է և ամենայն բարեխղճությամբ իր տեսածն ու լսածը մանրամասնորեն գրի է առել: Նրա բերած փաստերը ներկայացնում են այս կամ այն պատմական ժամանակամիջոցի ամբողջ պատկերը: Կասկածից վեր է նաև, որ Ստեփանոս Երեցը օժտված է սուր դիտողականությամբ ու նկարագրելու ձիրքով: Հենց այդ պատճառով նրա երկի մեծագույն արժեքը փաստերի հավաստիությունն է: Գիտակցելով դրա կարևորությունը՝ հենց ինքը՝ հեղինակը, բազմիցս շեշտում է դա: Նա պատմության ճշմարիտ պատկերը տալու համոզված ջատագով է: Լինելով ժամանակաշրջանի դեպքերին լավատեղյակ հեղինակ՝ Ստեփանոս Երեցը միևնույն ժամանակ իր նկարագրածի նկատմամբ ունի անաչառ վերաբերմունք: Հավաստելով պատմության առջև իր խորը պատաս-

խանատվության զգացումը՝ նա տարբեր առիթներով անընդհատ շեշտում է, որ ձգտել է հաղորդել առավել չափով ստույգ և մանրակրկիտ տվյալներ, ինչպես ինքն է ասում՝ «հարցուփորձի ըստուքելով» պատմական փաստերը: Հնարավորության սահմաններում նա միշտ խուսափել է ոչ արժանահավատ կամ հակասական տեղեկություններից ու վկայություններից: Հետևաբար, Ստեփանոս Երեցը մեզ ներկայանում է որպես բարեխիղճ, ստուգապատում պատմագիր:

Բնականաբար, չունենալով հիմնավոր կրթություն՝ նա երբեմն չի կարողանում խորամուխ լինել պատմության խրթին, իրարամերժ ու հակասական իրադարձությունների մեջ, կատարել լայն ընդհանրացումներ, սակայն դրա փոխարեն նրա հաղորդած հարուստ և ուշագրավ տեղեկությունները մեծապես արժևորում են նրա կատարած գործը: Ըստ երևույթին, նրա համար չափազանց դժվար է եղել տարբեր տարիների, գուցե նաև զանազան վայրերում ժողոված փաստերն ի մի բերել ու խմբավորել, այդ պատճառով նա չի կարողանում խուսափել նյութի ցրվածությունից ու կրկնություններից: Ուստի առանձին հարցեր արծարծում է միայն հարևանցիորեն, քաղաքական անցուդարձերի նկարագրությանն առնթո՛ւր: «Պատմագրքում» ժամանակագրական կարգը ևս ոչ միշտ է պահպանված: Բացի այդ՝ քանի որ նա ձգտում է հնարավորինս շատ օգտակար տեղեկություններ հաղորդել, ուստի իր երկի մեջ ներառում է բավականին շատ կողմնակի նյութեր:

Թեև ինքը չի հիշատակում, բայց պատմագրքի քննական վերլուծությունից երևում է, որ Ստեփանոս Երեցը ըստ երևույթին, օգտագործել է նաև գրավոր աղբյուրներ, ժամանակագրություններ, ձեռագիր հիշատակարաններ, վավերագրեր և այլն:

Որպես խորագիտակ հետազոտող նա հիանալի է ըմբռնել ժամանակի ոգին: Առհասարակ, շնորհալի և ուշիմ քահանան հանդես է գալիս իբրև XVIII դարի մարդ: Հենց դա էլ նրան հնարավորություն է տվել անսխալ մեկնաբանելու իրադարձությունները: Պարզ երևում է, որ Ստեփանոս Երեցը մոտ է կանգնած իր հարազատ ժողովրդին, լավ գիտի նրա առօրյան ու հոգսերը և դրանց մասին ամենայն բարեխիղճությամբ հաղորդում է ընթերցողին:

Որպես պատմագիր Ստեփանոս Երեցը անշուշտ ինչ-որ չափով տուրք է տվել կրոնական մտածողությանը, որը միանգամայն բնական է: Չպետք է մոռանալ, որ նա հոգևորական էր և մի ժամանակի ծնունդ, երբ կրոնը ոչ միայն հավատք էր, այլև տիրապետող գաղափարախոսություն: Անշուշտ, դա չէր կարող իր կնիքը չթողնել Հայ առաքելական եկեղեցու ոգով սնված ու դաստիարակված քահանա-պատմագրի գրչի և նրա աշխարհայացքի վրա: «Պատմագրքի» հեղինակը միամիտ անկեղծությամբ ամբողջական էջեր է նվիրում զանազան տեսիլքների ու հրաշապատումների, հրաշագործ սրբերի կատարած գործերի նկարագրությանը:

Լինելով խորապես հավատացյալ անձնավորություն՝ Ստեփանոս Երեցը միաժամանակ կյանքի մարդ էր՝ աշխարհի չարի ու բարու առողջ ընկալումով, միշտ կենսասեր, լավատես: Նա նաև լցված էր վառ սիրով դեպի իր ծննդավայրը, հեռու հեռվում գտնվող հայրենի աշխարհը և Հայ առաքելական եկեղեցին: Անկասկած, պատմագիրը չէր կարող զերծ մնալ նաև ժամանակի կրոնական նորմերի այնպիսի դրսևորումներից, որպիսիք էին թշվառությունները, պատահարները, ճախորդությունները, անհաջողությունները մարդկանց գործած մեղքերով («վասն մեղաց մերոց») բացատրելը: Ուստի հասկանալի են այն սահմանափակությունը և միակողմանիությունը, որ երբեմն-երբեմն զգացվում են նրա երկում: Ստեփանոս Երեցի «Պատմագիրքը» աչքի է ընկնում շոշափվող հարցերի բավականին մեծ բազմազանությամբ: Բացի Իրանում ծավալվող քաղաքական իրադարձությունների, պատերազմական գործողությունների, մեծ ու փոքր բռնակալների չարագործությունների, ներքին խռովությունների ու ապստամբությունների նկարագրություններից՝ նա շահեկան տեղեկություններ է հաղորդում նաև Իրանի հայ համայնքի, իրանական քաղաքների, այնտեղ ապրող բնակիչների սովորույթների, վարքուբարքի, կենցաղի, նրանց տրամադրությունների, զբաղմունքների և այլնայլ հարցերի վերաբերյալ: Թեև նրա հաղորդած տեղեկություններն առավելապես վերաբերում են Իրանի քաղաքական իրադարձություններին, սակայն ուշադրությունից դուրս չեն մնում նաև սոցիալական և տնտեսական կյանքին վերաբերող իրողությունները: Թռուցիկ ակնարկներով հարևանցիորեն, բայց-նայնպես, նա անդրադարձներ է կատարում նաև Իրանի հարակից երկրների՝ Աֆղանստանի, Հնդկաստանի, Օսմանյան կայսրության, Վրաստանի և այլոց պատմության առանձին դրվագներին, որոնք, անկասկած, ունեն որոշակի գիտական արժեք: Այս առումով Ստեփանոս Երեցը շահեկանորեն տարբերվում է իր ժամանակի պարսիկ պատմագիրներից, որոնց գործերում գլխավորապես նկարագրվում են թագավորների վարած պատերազմները, նրանց տարած իրական և մտացածին հաղթանակները, շահական արքունիքում կազմակերպվող շոնդալից խրախճանքները և այլն: Անկասկած, որոշակի արժեք են ներկայացնում նաև Ստեփանոս Երեցի հաղորդած տեղեկությունները Սեֆյան Իրանի՝ Նադիր շահի պետության, զենդերի ու դաջարների պետական համակարգի, վարչական կառուցվածքի, հարկային քաղաքականության և նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ սեղմ, սակայն հավաստի ու արժեքավոր տեղեկությունները: Այդ բոլոր հարցերին անդրադառնալիս նրա ուշադրությունը, սակայն, մշտապես բևեռված է իրանահայ համայնքի կյանքի վրա:

Ստեփանոս Երեցի լեզուն գրաբարն է, սակայն այն չափազանց մոտ է աշխարհաբարին: Թեև արդեն XVII-XVIII դարերում Իրանի հայ գաղթաշխարհում տիրապետող գրական լեզուն գրաբարախառն աշ-



խարհաբարն էր, սակայն լինելով հոգևորական՝ պատմագիրը նախապատվությունը տվել է գրաբարին: Իրողություն է նաև այն, որ նրա լեզվին բնորոշ են XVII-XVIII դարերի մեր մատենագրության հասկանչական կողմերը, այսինքն՝ և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի տարրերը, ինչպես նաև պարսկերեն և թուրքերեն բառերի, դարձվածքների ու արտահայտությունների առատությունը: Հեղինակն օգտագործում է նաև օտար և բարբառային բառեր: Ավելորդ չէ նշել, որ Ստեփանոս Երեցն ունի նաև որոշ գրվածքներ, օրինակ՝ «Նամակներ», որոնք գրված են XVIII դարի վերջում հայ իրականության մեջ տարածում գտած կես աշխարհաբարով: Նա հեղինակել է նաև թուրքերեն և պարսկերեն գրվածքներ, առանձին ասույթներ, ոտանավորներ և այլն:

Նրա երկի շարադրանքն աչքի է ընկնում կենդանի, հյութեղ, անպաճույճ ոճով՝ համեմված ժողովրդական դարձվածքներով և Փերիայի հայերի բարբառով, որոնք առանձին կենդանություն են տալիս շարադրանքին: Համեմատություններն ու մակդիրները հարստացնում են երկի պատմելաձևը:

Մինչև 1880-ական թթ. Ստեփանոս Երեցի պատմագիրքը, ինչպես և իր անձը մնացել էին անհայտության մեջ: Առաջինը նրա գործը հանրությանն է ներկայացրել Նոր Ջուղայի պատմության հեղինակ Հարություն Տեր-Հովհանյանը<sup>3</sup>: Իր աշխատությունը շարադրելիս Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրատանը նա պատահամաբ հայտնաբերում է «Պատմագիրքը» և նրա մատուցած նյութերն ընդգրկում իր աշխատության մեջ: Ըստ էության, XVIII դարի դեպքերով ու իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանի եղելությունները նա կառուցել է նշված աղբյուրի տեղեկությունների վրա: Հ. Տեր-Հովհանյանը անկեղծորեն խոստովանում է, որ «Պատմագիրքը» մեծապես օգնել ու ոգևորել է իրեն իր ձեռնարկած գործը ավարտին հասցնելու համար:

Հ. Տեր-Հովհանյանը նաև խոստովանում է, որ «Պատմագիրքը» ընթերցողին է ներկայացնում ոչ ամբողջությամբ, այլ «ընտրանօք քաղեալ», ասել է թե՛ նյութերի սեփական ընտրությամբ կամ հայեցողությամբ՝ սրբագրելով, կրճատելով և դուրս թողնելով իր կարծիքով «ավելորդ կրկնաբանությունները», սակայն ամբողջությամբ պահելով «բուն իմաստը»։ «Ոճ պատմութեանն էր բազմաբառ և սակաւիմաստ,- գրում է նա,- յորմէ ընտրանօք քաղեալ զեւտեղեցի յիմում պատմութեան զնիւթս իւրաքանչիւր գլխոյ պատշաճաւոր. և ուրանօր ի մէջ բերի զտրաբանս ի վկայութիւն, ոչ առանց սրբագրութեան թողի, զաւելորդ կրկնաբանութիւնս յապաւելով՝ և զբուն իմաստն պահելով ամբողջ»<sup>4</sup>:

Միաժամանակ կատարելով քննախույզ աղբյուրագետ-պատմա-

<sup>3</sup> Տե՛ս Հ. Տեր-Յովհանէանց, Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. 1, Նոր Ջուղա, 1880, էջ 3:

<sup>4</sup> Հ. Տեր-Յովհանէանց, նշվ. աշխ., էջ 3:

բանի գործ՝ Հ. Տեր-Հովհանյանցը աշխատել է Ստեփանոս Երեցի հաղորդած նյութերը համեմատել այն աղբյուրների հետ, որոնց ստուգության և պատմական հավաստիության վերաբերյալ ինքը որևէ կասկած չի ունեցել: «Զամենայն շարադասութիւն նիւթոյ այսր պատմութեան՝ ոչ գրեցի առանց քաջ խելամուտ լինելոյ հաւաստի ապացուցութեանց նոցին, քաղելով յաղբերաց՝ և բաղդատելով ընդ այնպիսի հնութեանց՝ զորոց ստուգութենէ ոչ էր մարթ երկբայութիւն ինչ ունել»<sup>5</sup>, - գրում է նա:

«Պատմագրքից» բարեխղճորեն հղումներ կատարելիս Հ. Տեր-Հովհանյանցը միշտ երախտագիտությամբ է հիշատակում պատմագրի անունը:

Թեև Ստեփանոս Երեցի կյանքն ու նրա թողած գրական ժառանգությունը արժանացել են մի շարք ուսումնասիրողների ուշադրությանը, սակայն այդ ժառանգության ամենաարժեքավոր գործը՝ «Պատմագիրքը», այնուամենայնիվ կարոտ էր ամբողջական հրատարակության, ընդ որում՝ նաև աշխարհաբարով՝ հանրության լայն շրջանակներին մատչելի դարձնելու համար:

Ստեփանոս Երեցի «Պատմագիրքը» սկզբից մինչև վերջ շաղախված է արցունքով, երբ նա նկարագրում է իր հարազատ ժողովրդի կրած տառապանքները: Հայության ցավերով տառապող հայրենասեր պատմագիրը, գիտական բժախնդրությամբ արձանագրելով իր ապրած ժամանակաշրջանի անցքերը, դառնությամբ ու սրտի անհուն կսկիծով նշում է, որ բոլոր տիպի իշխանավորների, բռնացողների, խռովարարների, անսանձ տարրերի չարագործությունների զոհը այդ մութ ու անապահով ժամանակներում առաջին հերթին դառնում էր անզեն, անպաշտպան, անտերունչ և իրավագուրկ հայությունը: Այդ բոլոր արնախում բռնավորներին պատմագիրն անվանում է «մարդադեմ գազան»:

XVII-XVIII դարերում հայ ժողովրդի անբաժանելի մաս իրանահայությանը բաժին հասած աղետներն ու դժբախտությունները, ըստ Ստեփանոս Երեցի, անչափելի են: Նա այդ միտքը ձևակերպում է մի կարճ, բայց դիպուկ արտահայտությամբ՝ «խարխուլ արար երկիր մեր»:

Բանալի բառեր – *«Պատմագիրք», Ստեփանոս Երեց, Փերիա գավառ, իրանահայեր, հայկական աղբյուրներ*

**ВААН БАЙБУРТЯН – Иерей Степанос Азарджрибеци и его «Книга истории».** – Для изучения истории Ирана на стыке позднего средневековья и нового времени чрезвычайно важны богатые армянские источники. Одному из них – книге иерея Степаноса Азарджрибеци – и посвящена статья. Степанос был превосходно осведомлён не только о том, что происходило в современной ему Персии, но и в соседних странах. Он излагает в своей книге события, которые разворачивались в конце XVII – начале XVIII вв. в Иране, а также повествует о жизни армянской общины этой страны, в особенности об армянах провинции Перия.

<sup>5</sup> Նույն տեղում:

**Ключевые слова:** «Книга истории», иерей Степанос, Перия, провинция, иранские армяне, армянские источники

**VAHAN BAYBURDYAN – *Stepanos Yerets (Vicar) Hazarjribetsi's "Hangitagirq"***. – Multifaceted and rich Armenian sources are of great importance for the study of the history of late medieval and modern Iran. This article is dedicated to the study of one of these sources – the history of Stepanos Yerets Hazarjribetsi. He was well aware not only of what was going on in Persia of his time but also in neighboring countries. In his work, he describes the events of the late seventeenth and early eighteenth centuries in Iran, reports on the Armenian community of that country, and the Armenians of Peria province in particular.

**Key words:** “*Hangitagirq*”, *Stepanos Yerets*, *Peria province*, *Iranian Armenians*, *Armenian sources*

Ներկայացվել է՝ 20.09.2019

Գրախոսվել է՝ 14.10.2019

Ընդունվել է տպագրության՝ 29.11.2019